

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Հայկ Գասպարյան

ԴՅՈՒԼՈՐԻԵԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆԻ ՀԵՏ

Հայկական ՍՍՌ-ի Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանում պահպանվում է ականավոր հայագետ Մկրտիչ Հմինի հարուստ արխիվը: Բացի Հմինի անձնական ձեռագրերից և ուրիշ փաստաթղթերից, արխիվում կա մեծ քանակությամբ թղթակցությունն ոչ միայն հայ և ռուս գրողների ու գիտնականների հետ, այլև արևմտաեվրոպական (մասնավորապես ֆրանսիացի) արևելագետների հետ. այդպիսի նամակների թիվը հասնում է ավելի քան երկու հարյուրի:

Մկրտիչ Հմինը 40 տարի՝ մինչև 1882 թվականը պաշտոնավարել է Մոսկվայի Հազարյան ճեմարանում, որպես հայոց լեզվի և գրականության դասատու: Դասախոսելով հանդերձ, նա ունեցել է գիտական բեղուն գործունեություն, նվիրված հայագիտության տարբեր բնագավառներին: Նա խոշոր դեր է կատարել հայ ժողովրդի պատմությունն ու նրա դարավոր կուլտուրան ռուս և արևմտաեվրոպական գիտական աշխարհին ծանոթացնելու գործում:

Մ. Հմինի գրական գործունեությունն ընդգրկում է հայոց պատմությունը, հայ գրականության պատմությունը և եկեղեցական պատմությունը: Նրա գլխավոր աշխատություններն են՝ «Վեպր հնույն Հայաստանի», «Об армянском алфавите», «Мойсей Хоренский и древний эпос армянский», «Династический список Хайкидов», «Об Аршакидах» և այլն:

Իր գիտական և հասարակական գործունեությամբ Հմինը գրավոր կապեր է ունեցել հայ, ռուս և արևմտաեվրոպական բազմաթիվ գիտնականների, մասնավորապես հայագետների հետ, ինչպիսիք են Վիկտոր Լանգլուան, Ֆելիքս Նելլը, Էդուարդ Դյուլոնիեն, Եվարիստ Պոուդոմը, Բրոսեն և ուրիշներ: Նա եղել է Փարիզի Ասիական ընկերության անդամ և աշխատակցել է նույն ընկերության ամսագրին՝ «Journal Asiatique»-ին:

Հմինը մեծ քանակությամբ նյութ և գրականություն է հայթայթել եվրոպական գիտնականներին և հաճախ այդպիսի աջակցության շնորհիվ է, որ նրանք կարողացել են առաջ տանել իրենց ուսումնասիրություններն ու հետազոտությունները հայ մատենագրության և հայոց պատմության մասին: Այդ էն վկայում այն բազմաթիվ անտիպ նամակները, որ Հմինը ստացել է վերոհիշյալ գիտնականներից: Անհնար լինելով նման մի հաղորդման մեջ ծանոթացնել վերոհիշյալ հարուստ նամակագրությունը, մենք այս հոդվածում կփորձենք ներկայացնել ականավոր հայագետ Էդուարդ Դյուլոնիեի նամակները միայն, որոնց մեջ շոշափված հարցերը անկասկած կհետաքրքրեն մեր բանասերներին և պատմաբաններին:

Էդուարդ Դյուլորիեն (1807—1881) եղել է դասախոս Փարիզի Արևելյան լեզուների վարժարանում, Փարիզի Ասիական ընկերության անդամ և ավելի ուշ՝ Ֆրանսիայի Արևելյան ընկերության ամսագրի գլխավոր խմբագիր։ Նա ուսումնասիրել է արարական, դպրոցների, սլավոնական և հայկական լեզուները։ Հայերենը, ինչպես վկայում է իր 1850 թվի հունիսի 12-ի նամակում, սովորել է Փարիզի Մխիթարյան վարժարանի միարաններից և սովորել է հիմնովին, որը և հնարավորություն է տվել նրան հանդամանորեն, սկզբնաղբյուրներով ուսումնասիրել հայ ժողովրդի դարավոր պատմությունը, նրա հոգևոր կուլտուրան և գրել նրանց մասին արժեքավոր աշխատություններ, ինչպես

Recherches sur la chronologie Armenienne (1859)

Recit de la premiere Croisade — extrait de la chronologie de Matthieu d'Edesse (1850)

Açoghig de Daron, Historien armenien du X<sup>e</sup> siecle (1883)

Ահա վերոհիշյալ աշխատությունները գրելու ընթացքում է, որ Դյուլորիեն, ի թիվս այլ նշանավոր հայագետների, գրավոր կապ է հաստատում նաև Մ. Էմինի հետ։

Թանգարանի արխիվում պահպանվում են Էմինին ուղղված Դյուլորիենի 35 նամակները, որոնցից առաջինը գրված է 1850 թվականին, վերջինը՝ 1863 թ.։ Հիմք ունենք ենթադրելու, որ դրանից հետո էլ Ֆրանսիայի գիտնականը նամակագրություն է ունեցել Էմինի հետ։ Այդ մասին որոշ ակնարկություն կա Վ. Հանգլուայի 1864 թ. նամակում, որտեղ նա Էմինին ասում է. «...Դյուլորիեն դարձյալ ուզում է Ձեզ հետ թղթակցել, մի րան, որ անցյալում նրա համար եղել է օգտակար ու շահավետ»։

Դյուլորիեն, իր վերևում հիշված աշխատությունների, նույնպես և տարրեր հոգվածների կապակցությամբ, որ հրատարակվել են «Journal Asiatique» և «Revue des deux mondes» ամսագրերում, շատ անգամ դիմել է Էմինին և ստացել նրա անվերապահ աջակցությունը՝ ձեռագրեր, տեղեկություններ և այլ աղբյուրներ ընձեռելու գործում։ Դյուլորիենի նամակները արտահայտում են նրա խորը երախտագիտությունը Մ. Էմինի օժանդակության համար, ցույց են տալիս Ֆրանսիայի արևելագետի վերաբերմունքը հայագիտության հետ կապված մի շարք հարցերի, դեպքերի, դեմքերի նկատմամբ։ Դրանք արժեքավոր են իրենց պարունակած ուշագրավ գիտողություններով, հաճախ փաստական նյութով։

Մենք ցանկանում ենք մեջ բերել Դյուլորիենի 1850 թ. դեկտեմբերի 17-ի նամակը ամբողջությամբ, որով սկսվում է Դյուլորիենի և Էմինի նամակագրությունը, իսկ մյուս նամակներից կատարել մեջբերումներ, որոնք առնչվում են հայագիտության հետ։

«Փարիզ, 17 դեկտեմբերի 1850.

Պարոն.

Փարիզի Ասիական ընկերությունը, որին Դուք բարեհաճել եք ուղարկել Ձեր «Վեպք հուլյն Հայաստանի» հմտալի աշխատությունը, ինձ հանձնարարեց այս ամսի 13-ին կայացած ժողովում, որ շնորհակալություն հայտնեմ Ձեզ այդ չափազանց հետաքրքիր հաղորդագրության համար։



Ժողովում ես ծանոթացրի Ձեր աշխատության նյութը, որը կարգացել էի հաճույքով և ուշադրությամբ: Ելնելով իմ ասածներից և ըմբռնելով Ձեր հետազոտությունների ամբողջ կարևորությունը, Լ՛նկերությունն ինձ վրա պարտք դրեց գրավոր զեկուցում պատրաստել Ձեր դիտարկության մասին: Այդ զեկուցումը հրատարակվելու է Լ՛նկերության ամսագրի հետագա համարներից մեկում: Ես լիովին գնահատում եմ Ձեր հմտալի հետազոտությունները, որոնք ցույց են տալիս, թե ինչ ձևով է Մովսես Խորենացին օգտագործել պատմական վեպերը՝ շարադրելու համար իր սքանչելի պատմությունը: Բայց և այնպես ինձ թվում է, որ Դուք մի քիչ չափազանցում եք, երբ ասում եք, թե այդ վեպերը կազմել են մի անընդհատ ցիկլ՝ սկսյալ 565 թվից (մ. թ. ա.) մինչև մեր թվագրության 129 թվը, և հանդես են եկել որպես մի պոեմա, նման Ֆիրգուսի Շահ-Նամեին: Ես կարծում եմ, որ պատմական վեպերը գոյություն են ունեցել առանձին-առանձին, Հայաստանի տարբեր գավառներում և գլխավորապես Գողթն գավառում, բայց նրանք երբեք միացված չեն եղել մի մեծ, շարունակական երկի մեջ, նման ըստպոզների հատվածներին, որ Պիսիստրազն իրար միացնելով կազմել է Իլիականը: Ես այս տեսակետը կզարգացնեմ, երբ սկսեմ գրել իմ հոդվածը Ձեր բրոշյուրի մասին, որին ծանոթացել էի մի որոշ ժամանակ առաջ, պ. Լվայան Ֆլորիվալի հաղորդագրությունից:

Անցյալ տարի „Journal Asiatique“-ում ես հրատարակել էի Միքայել Ասորու ժամանակագրությունից մի հատված, իսկ այժմ հենց նոր լույս ընծայեցի նաև Մաթեոս Մուհայեցու պատմության մի մասի թարգմանությունը, որը վերաբերում է Առաջին խաչակրությանը: Եթե Դուք ինձ հայտնեք, թե ինչ միջոցով կարելի է այս երկու աշխատությունները Ձեզ ուղարկել, ես հաճույքով դրանք Ձեզ կնվիրեմ: Ես կարծում եմ, թե Ֆրանսիայում առաջին անգամ ես եմ ղգացել, թե արևելքի պատմության համար ինչքան նյութեր կարելի է քաղել հայկական գրքերում պարփակված նոր ու անծանոթ վաստաթղթերից:

Ինչ որ ես սովորել եմ Ձեր լեզվից, այն պարտական եմ Փարիզի հայկական վարժարանի Մխթարյան միարաններին: Նրանց դասերի ու խորհուրդների շնորհիվ է, որ ես կարողացել եմ որոշ առաջադիմություն անել:

Այժմ հրատարակության համար պատրաստում եմ մի աշխատություն, որը պարունակելու է հայ հեղինակների բոլոր տեղեկությունները Թուրինյան թագավորների հարաբերությունների մասին, լատինացվող հետ: Դժբախտաբար մեր Bibliotheque Nationale-ը (Ազգային մատենադարանը) հարուստ չէ պատմիչների աշխատություններով: Կա մի պատմագիր, որին շատ եմ ուզում ծանոթանալ. դա Սմբատ Կիլիկիացին է, որը հիշատակվել է Չամչյանի կողմից որպես «Պատմություն Կիլիկեցիոց»-ի հեղինակը: Բնձ համար անհրաժեշտ է նաև Վահրամ Բապունը, որը հրատարակվել է Մադրասում 1810 թվին և որը չի ճարվում Փարիզում: Եթե Դուք կարողանալիք ինձ համար ձեռք բերել այս պատմիչներից մեկնումեկը, դա կլիներ մի խոշոր ծառայություն: Եթե որևէ մեկը բարեհաճեր ինձ տրամագրել դրանք, ես արտագրել կտայի և շուտով կվերագրեմ: Ես շատ կցանկանայի ունենալ Կիրակոս Դանձակեցին, Մաղաքիա Արեղան, Ստեփաննոս Օրբելյանի «Սյունյանց պատմություն»-ը, ինչպես նաև Ասողիկը, Մովսես

Կաղանկատուացին, Սերեոսը և ուրիշները Կգտնվի արդյոք որևէ մեկը, որ վերոհիշյալներն արտագրի հարմար և խղճամիտ վարձատրություն փոխարենը Ձեզ մոտ կարելի է ճարել Առաքելի պատմությունը, որը տպագրված է Ամստերդամում 1669 թվականին: Եվ վերջապես, Հովհաննես կաթողիկոսի պատմությունը վաճառվում է Կ. Պոլսում, և կամ ռոտեղից՝ կարելի է այն ձեռք բերել, որևէ բան գիտեք այդ մասին: Ահա մի շարք հարցումներ, որոնք անշուշտ անհարմար են առաջին նամակի համար, սակայն ես հավատացած եմ, որ գիտություն սերն ինձ կարգարացնի Ձեր առջև: Իմ միակ նպատակն է մերոնց մեջ տարածել Ձեր գեղեցիկ գրականությունը և ցույց տալ, որ այն արժանի է ավելի մեծ ուշադրության՝ գիտնական աշխարհի կողմից: Միևնույն ժամանակ ես ուղում եմ ցույց տալ, թե ինչքան վսեմ դեր է կատարել Ձեր ազդը անցյալում և ինչքան մեծ է եղել նրա սերը արևմուտքի հանդեպ: Ես համոզված եմ, պարոն, որ մեր ընդհանուր ուսումնասիրությունների բերմամբ մենք կկապվենք հաճախակի թղթակցության և Դուք երբեմն ինձ կուղարկեք Ձեր հմտալի աշխատությունները: Այստեղ ոչ ոք ավելի չի հետաքրքրվում այդ բանով, որքան ես: Դուք կարող եք ինձ գրել հայերեն. ես շատ հեշտությամբ կարող եմ կարդալ այդ լեզվով գրված նամակները: Ժամանակի սղություն պատճառով ինձ հնարավոր չեղավ ավելի վաղ սկսել նամակագրություն Ձեզ հետ:

Ձեր աշխատության մասին իմ զեկույցումը կարգացվելու է Ասիական ընկերության առաջիկա հանգիստումին և ապա տպվելու է մեր ամսագրում: Ինձ համար մեծ հաճույք է Ձեր գնահատելի երկասիրությունները ծանոթացնելը մեր գիտնականներին:

Եթե ես Փարիզից կարող եմ Ձեզ օգտակար լինել գրական հետազոտությունների և կամ ուրիշ որևէ ծառայության կապակցությամբ, խընդրում եմ առանց վարանելու ինձ գիմեցեք:

Հաճեցե՞ր ընդունել խորին հարգանքս հավաստիքը, և այլն:

Է. Դյուլոբին

1851 թ. փետրվարի 12-ի նամակում Դյուլոբին գրում է. «Ամսի 1-ին Ֆրանսիական գեսպանատան հասցևով ես ուղարկեցի Մաթեոս Ուռհայեցու Առաջին խաչակրության պատմության իմ թարգմանությունը, որը Ձեզ եմ նվիրում, որպես իմ հարգանքի արտահայտությունը: Դուք պիտի տեսնեք, որ առաջարկում ես գրել եմ, թե ինչպիսի նոր հետաքրքրություն կարող է առաջացնել Միջին դարու հայ գրականությունը, որը մինչև այժմ անտեսվել է: ...Ներկայումս ես պատրաստում եմ մի աշխատություն այն հայ պատմիչների մասին, որոնք գրել են խաչակրության պատմությունը: Արդեն ունեմ տասնմեկ ֆրագմենտներ՝ տարբեր մեծությամբ: Սակայն ինձ պակասում է Սմբատ Կիլիկիացու «Պատմություն Կիլիկեցիոց»-ը: Այդ ձեռագիրը գտնվում է Էջմիածնի վանքի մատենադարանում: Եթե Դուք որևէ բարեկամ ունեք այդ վանքում, ինձ մեծ ծառայություն մատուցած կլինեք, դրա մեկ օրինակը արտագրել տալով: Ես շատ երախտապարտ եմ, որ սիրահոժար կերպով ուղում եք ինձ տրամադրել Ձեր սեփական գրագրարանի ձեռագրերը: Կիրակոս Գանձակեցու պատմությունից ինձ հարկավոր է քաղվածքներ անել իմ խաչակիրների պատմության ժողովածուի համար: Անհրաժեշտ է, մանավանդ, հայ հեղի-



նակներն տեղեկութիւնները Մոնղոլներն պատմութեան մասին, ես կուզեի ձեռք բերել նաև Ստեփանոս Օրբելյանի «Սյունյաց պատմութիւնը»։ Ինձ համար շատ արժեքավոր է, նույնպէս, Մովսէս Կաղանկատվացին։ Դուք ասում եք, թե այս ձեռագրերը կարող եք ինձ տրամադրել որոշ ժամանակով արտագրելու համար։

1851 թ. մարտի 26-ի նամակում Դյուլորիկն հաղորդում է, թե ստացել է Էմինի ուղարկած ձեռագրերը, շնորհակալութիւն է հայտնում և խոստանում է գրանք շուտով արտագրել ու վերագործնել։ Հայտնում է, թե ինքը ավարտել է «Քաղվածքներ հայ պատմիչներից» խաչակրութեան մասին՝ աշխատութեան առաջին հատորը, և ավելացնում է. «Հայագետների թիւը բավական սահմանափակ է։ Ոչ ոք չի մշակում այն գեղեցիկ ու հարուստ զրականութիւնը, որ տվել է Ձեր երկիրը։ Բմ նպատակն է գիտական աշխարհին ծանոթացնել, թե ինչքան մեծ արժեք են ներկայացնում նոր ժամանակագրութիւնները՝ արեւելքի պատմութեան մեջ։ Ես մտադիր եմ հրատարակել ժամանակագրութիւնների մի ժողովածու՝ Հայկական Պատմական Մատենադարան» վերնագրով։ Այդ գրքում ես պետք է հիշատակեմ այն աջակցութեան մասին, որ Դուք ընձեռել եք՝ ձեռագրեր հայթայթելու գործում։

1851 թ. օգոստոսի 8-ի նամակում նա գրում է. «Արդյոք Ձեզ հայտնի է որևէ աշխատութիւն, որ գրված լինի հին հայկական տաղաչափութեան մասին։ Ես այժմ ուսումնասիրում եմ շարականը, որն անկասկած պարունակում է հնագույն բանաստեղծութեան նմուշներ։ Ձեք կարող ինձ համար ճարել այս գրքից մեկ օրինակ, Կ. Պոլսի 1815 թ. հրատարակութիւնը, կամ մի ուրիշը»։

1852 թ. մայիսի 3-ին նա գրում է. «Ձգիտեմ ինչպէս հայտնեմ իմ երախտագիտութիւնն այն բանի համար, որ Դուք խոստանում եք ինձ տալ Մովսէս Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից Աշխարհի» գրքի մեկ օրինակը։ Եթե գիտենայի, թե Ձեր նպատակն էր նվեր անել, ես երբեք ինձ թույլ չէի տա այն խնդրել Ձեզնից»։

Նույն թվին գրված մի այլ նամակում Դյուլորիկն ասում է. «Տակաւին չեմ ստացել Շարականը, որի մասին հաղորդում եք, թե Թիֆլիսից բերել եք տվել ինձ համար։ Խորապէս շնորհակալ եմ Ձեր քաջած ներդրութեան համար»։

1852 թ. նոյեմբերի 26-ին գրում է. «Արդյոք հույսս կտրեմ Մեսրոպ Թաղիադյանցի «Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատութիւնից, որը տպված է Կալկաթայում, 1843 թվականին։ Այս գրքի համար ես գրել եմ Վիեննա, Իզմիր, Կ. Պոլս, բայց չեմ ճարել։ Հնարավոր է արդյոք այն ձեռք բերել Մոսկովայում։ Շատ շնորհապարտ կլինեի, եթե այդ գիրքն ունենալու հաճույքն ինձ պատճառեիք»։

1853 թ. հուլիսի 3-ին գրում է. «Ես սկսել եմ պատրաստել ժողովրդական ստեղծագործութիւնների և երգերի մի ժողովածու, բառիս իսկական առումով, ստեղծագործութիւններ, որոնք հեղինակ չունեն և որոնց ակունքները անհայտ են, և բերնից բերան անցնում են ժողովրդի մեջ, նման այն ժողովածուին, որ հ. Ղևոնդ Ալիշանը անցած տարի հրատարակել էր Վիեննայում։ Ասում են, թե այդպիսի ժողովածուներ հրատարակվել են, սակայն, հակառակ իմ թափած ջանքերին, չհաջողվեց ձեռք բերել»։

Եթե Դուք ունեք նման ստեղծագործություններ, որոնք երգվում են, բարի եղեք ուղարկել ինձ:

1858 թ. դեկտեմբերի 17-ին գրում է. «Այժմ ես ուսումնասիրում եմ բյուզանդական և սլավոնական պատմիչների աշխատությունները և այդ հարցում Ձեր փորձառությունն ու գիտելիքները ինձ հաճախ անհրաժեշտ պիտի լինեն: Կարծում եմ, որ Մոսկվայում գոյություն ունի ուսական և սլավոնական գրականության բարեկամների ընկերություն, և կան մարդիկ, որոնք գրադվում են այդպիսի հետազոտություններով: Ես կցանկանայի նրանց հետ հարաբերության մեջ մտնել Ձեր միջոցով, և տեղեկանալ այս նյութի շուրջը եղած հրատարակություններին: Խնդրում եմ, բարի եղեք ինձ ուղարկել սլավոնական գրքերի մի ցուցակ և կամ գրախանութների գրացուցակներ, որպեսզի կարողանամ դրանք ձեռք բերել»:

Դյուլորիեն էմինից խնդրել է նաև այլ բնույթի աջակցություն: Օրինակ, նա խնդրել է, որ էմինը բաժանորդներ գտնի իր «Հայկական Պատմական Մատենադարան» գրքի համար, և էմինը այդ արել է մեծ հոժարությամբ:

Էմինի գործունեությունը չի սահմանափակվել միայն տեղեկություններ, ձեռագրեր և այլ գրականություն հայթայթելով արևմտաեվրոպական գիտնականներին: Նա նրանց ուղարկել է նաև իր սեփական աշխատությունները, որոնք մեծ հետաքրքրություն են առաջացրել Եվրոպայի գիտական շրջանակներում, քննարկվել են նրանց կողմից:

Էմինի հանրաճանաչ աշխատություններից է «Վեպա հնույն Հայաստանի»-ն, որի մեջ նա առաջին անգամ բացահայտում է այն իրողությունը, որ հնագույն դարերում հայերը ունեցել են իրենց ժողովրդական վեպը կամ էպոսը, որի մեջ նկարագրված է եղել իրենց դյուցազունների կյանքը: Հին հայ վեպի գոյությունը ապացուցելու համար, նա փաստ է ուղղում Խորենացու չափածո հատվածները՝ «Շերկներ երկին և երկիր»-ը, «Հեծավ արի արքայն Արտաշես»-ը, «Տեղ ոսկի տեղայր»-ը, «Հատված գնացյալ»-ը:

Էմինի «Վեպա հնույն Հայաստանի»-ն նորություն էր և որպես այդպիսին՝ մեծ հետաքրքրություն է ստեղծել գիտական աշխարհում:

Այդ աշխատությունը այնքան բարձր է գնահատվում Փարիզի Արևելյան ընկերության գիտնականների կողմից, որ էմինը ընդունվում է ընկերության անդամ: Դյուլորիեն, որը նույն ընկերության անդամ էր, իր 1851 թ. հունիսի 26-ի նամակում հայտնում է այդ մասին և ավելացնում. «Ընկերությունն իր շարքերում ընդունելով գրական աշխատություններով ականավոր դարձած մարդկանց, ինչպիսին եք Դուք, նպատակ է դնում ոչ միայն գնահատել գիտությանը մատուցած նրանց նախկին ծառայությունները, այլև հրահրել, որ նրանք նոր ծառայություններ մատուցեն: Ուղղում եմ ասել, թե Ընկերությունը ջերմորեն ցանկանում է, որ Դուք թղթակցության մեջ մտնեք իրեն հետ և աշխատակցեք նրա ամսագրին: Նա ուրախությամբ կընդունի Ձեր ուղարկելիք հիշատակարաններն ու դիսերտացիաները: Ես ինքս հանձն կառնեմ դրանք ներկայացնել խմբագրության կոմիտեին և անձամբ հետևել տպագրության գործին: ...Հասկանալի է, որ ներկայացված աշխատությունները պետք է լինեն ֆրանսերեն լեզվով: Բայց ես գիտեմ, որ Դուք շատ լավ տիրապետում եք մեր



Վեպլին, ուստի այս կետը ոչ մի դժվարություն չի ներկայացնելու Ձեզ համար: Համենայն դեպս, հարկ լինելու դեպքում, ես կարող եմ նայել ոճա-  
կան կողմը:

«Վեպլ»-ի մասին, նույն նամակում նա շարադրում է իր գիտողու-  
թյունները.

«Ձեր «Վեպլ» հնույն Հայաստանի աշխատություն մասին ես կար-  
դացի զեկուցում, որը տպագրվելու է ամսագրում: Դուք պիտի նկատեք,  
որ ես Ձեր բոլոր հետեություններին չէ, որ համաձայն եմ, բայց միաժամա-  
նակ գնահատում եմ դրանք, որ ինձ թվում են նոր և անժխտելի: Ես չեմ  
վարժում, որ հայերենում վեպ բառը ունեցել է այն նշանակությունը, որ  
Դուք նրան վերագրում եք: Նույնիսկ մտածում եմ, որ էպոս բառի նշա-  
նակությունն էլ բոլորովին նոր է: Ես չեմ կարծում նաև, որ Հայաստանն  
ունեցել է էպիկական պոեմա, նման Իլիականին կամ Օդիսսեանին: Իմ  
համոզմամբ հայկական հին բանաստեղծության բնույթը միշտ եղել է լի-  
րիկական, բայց ոչ մի դեպքում էպիկական: Դուք պիտի նկատեք, որ Ձեր  
աշխատությանն ես ավելացրել եմ մեծ քանակությամբ բացատրություն-  
ներ՝ հայկական բառերի պրիմիտիվ և արխայիկ նշանակությունների մասին:  
Այն բառերը, որ Դուք հիշատակել եք Ձեր վերջին նամակում, թեպետ շատ  
սրամիտ են, բայց այնուամենայնիվ հենվում են միայն ենթադրություն-  
ների վրա: Ինձ թվում է, թե բանասիրությունն ընդունում է միայն  
այն հետեությունները, որ ստուգված են ճշգրիտ բնագրերով: Իսկ հայկա-  
կան հին բնագրեր չկան. չկա ոչ մի բնագիր, որ ավելի հին լինի, քան  
Գրիգոր Լուսավորիչը:

Գյուղորհին «Journal Asiatique» ամսագրի հունվարի համարում  
«Վեպլ»-ի մասին գրում է մի ընդարձակ հոդված հետևյալ վերնագրով.  
«Etudes sur les Chants historiques et les traditions populaires de l'ancienne  
Arménie, d'après une Dissertation de M. Emin» և իր 1852 թ. մարտի 3-ի նամա-  
կում առում է. «Journal Asiatique»-ի հունվար ամսի համարում լույս տեսավ  
իմ հոդվածը Ձեր «Վեպլ» հնույն Հայաստանի մասին: Դուք այն կկարդաք  
և ինձ կհայտնեք Ձեր գիտողություններն ու քննադատությունը, որ ես  
կընդունեմ հաճությամբ և շնորհակալությամբ: Դրանից հետո, ես հարցն  
ուսումնասիրել եմ ուրիշ տեսանկյունից, այսինքն զուտ գրական տեսա-  
կետից, և խմբագրել եմ մի աշխատություն հին հայ ժողովրդական բանա-  
հյուսության մասին, որը լույս է տեսնելու մի հոշակավոր և հանրածանոթ  
թերթի՝ «Revue des deux mondes»-ի մեջ, որն անկասկած Դուք գիտեք:

Եվ իրոք, վերահիշյալ ամսագրում նա հրատարակում է «Les Chants  
populaires de l'Arménie» խորագրով մի հոդված, որի մասին հետևյալն է  
հայտնում էմինին, իր 1852 թ. մայիսի 3-ի նամակում. «Իմ նախորդ նամա-  
կից հետո ես հրատարակել ավի մի նոր հոդված «Վեպլ» հնույն Հայաստանի  
մասին «Revue des deux mondes» պարբերականում, որը Եվրոպայի ամե-  
նագնահատված և ամենահանրածանոթ գրական հրատարակությունն է:  
Այս հոդվածը բոլորովին այլ ձևով եմ գրել քան այն, որը տպվել էր «Jour-  
nal Asiatique»-ում: Սույն հոդվածով ես դիմել եմ, վերջին հաշվով, գրա-  
կան աշխարհին և կարծում եմ, որ այսպիսով ինձ հաջողվել է բավական  
հանրահայտ դարձնել Ձեր գիրքը և Ձեր անունը:

Բացի «Վեպլ» հնույն Հայաստանի աշխատությունից, Ասիական

ընկերությունը հետաքրքրվել է նաև էմինի ուրիշ աշխատություններով՝ և ցանկացել է տպել նրա գրվածքը հայ այբուբենի մասին: Այդ գրվածքը՝ րադկացած վեց գլխից, թարգմանվել է ֆրանսերենի Եվարիստ Պոուգոմի ձեռքով: Աշխատությունում էմինը հայտնում է այն կարծիքը, թե «հնագույն ժամանակներում հայերը գործ են ածել նշանք կամ նշանագիրք, որոնց հետքերը գտնվում են ձեռագրերում և մինչև իսկ տպագրված գրքերում: Այդ նշանք նմանություն են ունեցել եգիպտական հիերոգլիֆներին: Դրանցով գրվել են ս. Դրիգորի և Հովսիմեի խոսքերը, նրանց չարչարելու ժամանակ, ինչպես վկայում է Ագաթանգեղոսը: Էմինը գտնում է, որ հայոց գիրը բաժանվում է երկու տեսակի՝ Դանիելյան և Մեսրոպյան: Դանիելյանը հայոց հին գիրն է և գոյություն է ունեցել հին ժամանակներում, իսկ Մեսրոպյանը այն հին գիրն է, որ կատարելագործվել է Մեսրոպի կողմից և գործածության մեջ է մտել հինգերորդ դարում:

«Հայ գրերի մասին Ձեր աշխատությունը, որի մասին ինձ հայտնում եք, պետք է լինի շատ հետաքրքրական, —ասում է Դյուլոբին մի այլ նամակում: Այդ գրերը արտասանելու ձևը մի հարց է, որն ինձ շատ է զրադեցրել և որի մասին հետազոտություններ եմ արել: Ես կարծում եմ, որ դրանց ամենաճիշտ արտասանությունը՝ Մեծ Հայաստանի և հատկապես Մուշի (?) արտասանությունն է և ոչ թե Թիֆլիսինը, որն ինձ կոչտ է թվում: Այս նյութի մասին ես երկար տարիներից ի վեր վիճարանության մեջ եմ Պետերբուրգի ակադեմիայի անդամ պարոն Բրոսեի հետ: Հայր Դարբիելը (Այվազովսկին) միանգամայն իմ կարծիքից է: Երբ Ձեր այդ աշխատությունն ստանամ, ես այն հրատարակել կտամ մեր ամսագրում և այդ բանն ինձ հեշտ կլինի, քանի որ այժմ նշանակված եմ հրատարակչական հանձնաժողովի անդամ»:

Վերոհիշյալ աշխատությունն ստանալուց և կարդալուց հետո, հանձնաժողովը հաշվում է, որ դրա տպագրությունը մեծ ծախսերի կարոտ է, քանի որ այնտեղ գործածված նշանագրերի համար հարկավոր է նոր մայրերի փորագրել տալ: Բացի այդ, հանձնաժողովը չի բաժանում էմինի այն կարծիքը, թե հին ժամանակներում հայերի կողմից օգտագործված նշանագրերը հիերոգլիֆներ են եղել: Ահա թե ինչ է գրում այդ մասին Դյուլոբին, իր 1852 թ. հուլիսի 29-ի նամակում. «Հանձնաժողովը չի կարծում, որ այդ գրերը, որոնց Դուք հիերոգլիֆ անունն և տալիս, իրոք այդպիսի բնույթի նշաններ են եղել: Նա ենթադրում է, որ դրանք պարզապես սրկգրատառեր են, այսինքն կրճատման նշաններ՝ միմյանց ընդօրինակիչների գործածության համար: Հիերոգլիֆները եղել են հատուկ միայն եգիպտոսին, որտեղ ևս դադարել են գործածվելուց քրիստոնեության ժամանակաշրջանում: Հայերը արդի՞ք ունեցել են նմանօրինակ գրեր և դրանք պահպանել են քրիստոնեությունն ընդունելուց հետո: Այդ շատ անհավանական է: Ամենահին գրերը, որ մենք գտնում ենք հուշարձանների վրա, սեպաձև գրի են, բայց ոչ հիերոգլիֆներ, որոնց մասին չկա ոչ մի ապացույց, ոչ հուշարձանների վրա, ոչ ամենահին հեղինակների բնագրերում, ոչ էլ նմանության տեսանկյունից: Ընդունել, որ նրանց մոտ գոյություն են ունեցել այդպիսի գրեր, դա կլինի մի անհիմն հիպոթեզ: Եթե Դուք կարծում եք, թե այդպիսի բան հավանական է, ապա բարեհաճեցեք ապացուցել՝ վկայակոչելով մի որևէ հեղինակություն: Այդ նշանները, որոնց



Դուք հիերոգլիֆ անունն եք տալիս, ակներևաբար գործածվել են քրիստոնեութիւնը Հայաստանում մուտք գործելուց հետո, քանի որ դրանցից մի զգալի մասը մեզ հիշեցնում է քրիստոնեական գաղափարներ: Ես կրկնում եմ, որ հանձնաժողովը միաձայնութեամբ այն կարծիքին է, որ այդ նշանները պարզապէս սկզբնատուներ են, հնարված՝ ձեռագրերը ընդօրինակողների կողմից, առավել կրճատութեան հասնելու նպատակով: Հետևապէս, այդ գյուտարարութիւնը տեղի է ունեցել ներկա հայ գրերից հետո: Իսկ Ձեր աշխատութեան այն մասը, որը վերաբերում է Դանիելյան և Մեսրոպյան տառերին, արժեքավոր է, հանձնաժողովի կարծիքով, որը սակայն գրտնում է, թե ցանկալի կլինէր այդ մասը մի քիչ ավելի ընդարձակել:

Վերոհիշյալ դիտողութիւններից անկախ, Դյուլորիին բարձր է գնահատում Էմինի այդ աշխատանքը, ամբողջութեամբ վերցրած:

Էմինի գրչին է պատկանում Փաւստոս Բյուզանդի ֆրանսերեն թարգմանութիւնը, որը լույս է տեսել Փարիզում 1867 թվականին, Վիկտոր Լանգլուայի հրատարակած «Հայ պատմիչներ» ժողովածուի առաջին հատորում: Լանգլուան Էմինին գրած իր նամակում ասում է. «Այս գիրքը լավ ընդունվեց Փարիզի գիտական աշխարհի կողմից: Մոհի, Ռենանի և ուրիշ ֆրանսիացի արևելագետների կարծիքով այս արժեքավոր, գեղեցիկ և լուրջ աշխատութիւն է, որը պատիվ է բերում հեղինակներին»: Էմինի թարգմանութեան ֆրանսերեն ձեռագրերը ևս պահպանվում են Դրականութեան և Արվեստի թանգարանում:

Էմինի գլխավոր աշխատութիւններից մեկն է, անկասկած, *Խորենացու Պատմութեան* թարգմանութիւնը, ոուսաց լեզվով: «Էմինի 1858 թ. կատարած թարգմանութիւնը առաջինը չէր,—գրում է Եր. Շահադիզը,—նրանից առաջ էլ *Խորենացի* քանիցս թարգմանվել է զանազան լեզուներով՝ լատիներեն, Վիստոնների կողմից, ռուսերեն՝ Հովհաննես Սարկավագի կողմից, ֆրանսերեն՝ Ֆլորենտի կողմից և, վերջապէս, իտալերեն՝ Միսիթարյանների կողմից, բայց այդ թարգմանութիւններից և ոչ մեկը տակաւին բավարար կերպով չէր կատարել գիտնական աշխարհի պահանջը, մինչև իսկ բարեխիղճ Վիստոնների և հայկական Միսիթարյանների թարգմանութիւնները ևս դեռ չէին հարթել այն ճանապարհը, որով միտքն է դրել ընթանալ Էմինը—*Խորենացու ճշգրիտ թարգմանութիւնը* գիտնական աշխարհին ներկայացնելու ճանապարհը: Եվ չնայած բոլոր դժվարութիւններին, Էմինը այնպիսի հաջողութեամբ կատարեց իր ստանձնած գործը, որ նրա թարգմանութիւնը մինչև 1857 թվականը, երբ նա նորից հարկ համարեց թարգմանել այն, մնաց բոլոր թարգմանութիւնների մեջ ամենաճիշտը, ամենաընտիրը:

Դյուլորիին իր մի շարք նամակներում անդրադառնում է Էմինի այդ աշխատութեանը:

1851 թ. հունիսի 26-ին Դյուլորիին գրում է. «Դուք ինձ հետ նույն կարծիքի եք, որ Մովսէս Խորենացու Պատմութեան մինչև այժմ եղած թարգմանութիւնները բոլորն էլ թերի են. բայց ավելացնում եք, թե եղածների մեջ առաջին տեղն է դրավում Լվայան Ֆլորիվալի թարգմանութիւնը. «զառաջին ունի գտեղի»: Ես այնքան բարձր կարծիք ունեմ Ձեր հմտութեան, ինչպէս և հայկական բանասիրութեան վերաբերյալ Ձեր ծանոթութեան մասին, որ ինձ թվում է, թե «զառաջին» բառը Դուք գործածել եք առանց մտադրելու, մինչդեռ իրականում Դուք ուզեցել եք ասել



«ովերջին»։ Հնարավոր չէ այլ կերպ անվանել մի այնպիսի այլանդակ աշխատություն, որը գրված է բարբարոս ֆրանսերենով և լի է իմաստի հակասություններով։ Այն «առաջին» գիրքն է, ի մեջ այլոց, որը պետք է վերստին գրել սկզբից մինչև վերջը։ Ինձ թվում է, թե Դուք անտեղյակ եք այս թարգմանության պատմությանը։ Հեղինակը նախ արել էր մի առաջին թարգմանություն և այն տպագրել էր տվել, սակայն առանց շրջանառության մեջ դնելու։ Ապա նա գնացել էր Վենետիկ և այն սրբագրել էր տվել հայր Գարրիելին։ Հենց այդ վարիանտն է, որ այժմ Դուք ինկատի ունեք։ Բայց այդ վարիանտներից ոչ մին ոչ էլ մյուսը արժանի չեն գիտական հետազոտության համար, քանի որ յուրաքանչյուր տողում սխալների կհանդիպեք։ Խորենացին թարգմանելու համար մարդ պետք է մեծ հմտություն ունենա հունական և արևելյան հնությունների մասին, հունական և լատինական գրականության, ժամանակագրության պատմության և աշխարհագրության մասին։ Կա մի ուրիշ թարգմանություն, որը թեև բավականին թերի է, բայց այնուամենայնիվ միակն է, որ ենթադրել կտա, թե հեղինակները տաղանդավոր են։ Դա Վիստոնների թարգմանությունն է։ Ակամա հիանում ես, երբ ինկատի ես առնում, թե նրանք այդ աշխատանքը կատարել են մի անճիշտ բնագրից, առանց որևէ մեկի աջակցության, առանց բառարանի, իսկ հայոց լեզվին ծանոթանալու համար ունեցել են միայն Աստվածաշունչը։ Նրանց թարգմանությունը մի ապացույց է անսահման կորուսվածության։ Նրանցից հետո հրապարակ ելած թարգմանիչները պարզապես բանագողեր են, որոնք ընդօրինակել են Վիստոնների լատիներեն թարգմանությունից։ Առաջին հերթին ֆրանսիացի թարգմանիչը և ապա իտալացի թարգմանիչները, որոնք ժեռույթով կոչեցյալ մի ոմնի ձեռամբ ֆրանսերենն են իտալերենի թարգմանել, բոլորն էլ խաբերա և հայոց լեզվից անտեղյակ մարդիկ են։ Սակայն հայր Գարրիելը վերանայել է իտալերեն թարգմանությունը, այն համեմատել է օրիգինալ բնագրի հետ և բազմաթիվ սրբագրություններ է արել։ Հետևապես, եթե Վիստոնների թարգմանությունը ամենաշնորհալին ու ամենաարժանավորն է, մյուս կողմից նույնքան իրավամբ կարելի է ասել, որ իտալերեն թարգմանությունը, հանդես գալով բոլորից հետո, նվազ թերի է, քան նախորդները։ Բարի եղեք դրանք ուշի ուշով վերանայելու և պիտի համոզվեք իմ ասածի ճշտության մասին։ Պետք է նույնպես ուշադրություն դարձնել այն բանի վրա, որ Հվայան Ֆլորիվալը բավականացել է պարզապես արտագրելով Վենետիկում 1827 թվականին տպված բնագիրը, որն իրեն չի պատկանում, այլ Մխիթարյաններին։ Պետք է ասել, որ բնագրի քննադատական վերաքննությունը ամենագովարին բանն է։

Երբ Դյուլորին իմանում է, որ էմինը մտադիր է ոռոսերենի թարգմանել Խորենացու Պատմությունը, շատ է ուրախանում և իր 1854 թ. մայիսի 11-ի նամակում գրում է. «Ես անկեղծորեն շնորհավորում եմ Ձեզ այն բանի համար, որ մտադիր եք հրատարակել Մովսես Խորենացու թարգմանությունը։ Մեր ձեռքի տակ գտնված թարգմանությունները ոչ մի արժեք չեն ներկայացնում, որովհետև հենց հեղինակներն իրենք բավական հմուտ չէին ձեռնարկելու համար մի այդպիսի աշխատության։ Մխիթարյանները իրենց ծանոթագրությունների մեջ արել են այնպիսի սխալ-



ներ, որ նույնիսկ տասը տարեկան երեխան չէր անի: Ես դեռ չեմ խոսում ֆրանսերեն թարգմանութեան մասին»:

1857 թ. դեկտեմբերի 26-ին գրում է. «Ես շատ ուրախ կլինեի, եթե իմանայի, որ Դուք շարունակում եք Մովսես Խորենացու թարգմանությունը ուսերենի: Անհամբեր սպասում են դրա հրատարակությանը: Կասկած չունեմ, որ նա մոռացության գիրկը կնետի մինչև այժմ գոյություն ունեցող թերի թարգմանությունները: Ես մտադիր եմ, վերջին հաշվով, այն օգտագործել իմ թարգմանության կապակցությամբ:

1858 թ. ապրիլի 3-ին գրում է. «Կարիք չկա նորից խոսելու այն մեծ հետաքրքրության մասին, որ ես տածում եմ դեպի Խորենացու Ձեր թարգմանությունը: Կարող եմ համոզված և առանց շոգոքորթության ասել, թե այն լինելու է մի սքանչելի աշխատություն, շատ ավելի դերադանց, քան ֆնացյալ բոլոր թարգմանությունները, որ գոյություն ունեն մինչև այժմ: Ես կասկած չունեմ, որ Դուք խորապես ուսումնասիրել եք այդ հեղինակը, որի մեկնարանության համար հարկավոր է ոչ միայն լավ տիրապետել հայոց լեզվին, այլև խորապես ճանաչել հին արևելքի պատմությունը»:

Մի այլ նամակում գրում է. «Շնորհակալությամբ ստացա Ձեր թարգմանած Մովսես Խորենացու Պատմության մեկ օրինակը, որն ինձ եք ուղարկել որպես նվեր: Նորհավորում եմ Ձեզ, այդ կարևոր և հմտալից թարգմանության համար: Ձեր թարգմանության մեծ մասը արդեն կարդացի և պետք է ասել, որ չափազանց գոհ ֆնացի: Դուք ճշգրիտ կերպով թարգմանել եք այդ գծվարձմբունիի հեղինակին: Մեծ բավականությամբ նկատեցի, որ Դուք կարողացել եք ճարտարորեն խուսափել այն հակասություններից (իմաստի), որ վիստում են ֆրանսերեն թարգմանության մեջ»:

Ուշագրավ ու բազմազան հարցեր է շոշափում Դյուլորիեի 1854 թ. մարտի 5-ի նամակը.

«Ես բնավ չեմ հրաժարվում—ինչպես Դուք այդ կարծում եք—խոսելուց պ. Հախվերդյանի հրատարակած հետաքրքրական գրքի մասին<sup>1</sup>: Այդ հրատարակությունը մի նոր ժանր է և այնքան ուշագրավ, որ չի կարելի լռություն պահել նրա վրայով: Ես ուզում էի միայն ասել, որ պետք է դեռ երկար ուսումնասիրեմ այն, որպեսզի թափանցեմ բանաստեղծությունների ներքին իմաստի մեջ: Ես գրանք հասկանում եմ, միակ խոչընդոտը որ կա, այն էլ արաբերեն ու պարսկերեն բառերի առկայությունն է, իսկ այդ երկու լեզուներն իմ ուսումնասիրության առարկան են եղել երկար ժամանակ: Սակայն, դարձյալ ժամանակ է հարկավոր, որպեսզի ընտելանամ հայկական ժողովրդական բանաստեղծությանը՝ իրավունքն ունենալու համար այդ մասին գրելու: Մինչ այդ, ես հրատարակելու եմ արդի հայերի մասին մի ուսումնասիրություն, որը կլինի նախապատրաստական աշխատանք՝ իմ հետագա նյութի համար: Սույն ուսումնասիրության մեջ ես ինկատի ունեմ Ռուսաստանի, Թյուրքիայի և գլխավորապես Ավստրիայի հայերը: Այսպիսի գծվար ու բարդ նյութի մշակման ժամանակ, անտարակույս, բավական սխալներ կպատահեն, բայց կարող եմ ասել, որ նկարագրելով հայերին իրենց՝ ըստ յուրյանց, ըստ նրանց գրքերին ու թերթե-

<sup>1</sup> Խոսքը վերաբերում է Սայաթ-Նովայի երգերի առաջին հրատարակությանը, որ կատարել է Հախվերդյանը 1852 թ.:

րին, ես կլինեմ համենայն դեպս, ավելի ճշգրիտ քան մյուս կորուսյալները, որոնք անգագար մոլորեցնում են մարդկանց, իրենց հաշվին շրջաբերության մեջ գնելով ամենասխալ ծանոթություններ: Ես ջանացել եմ ճշգրիտ լինել նամանավանդ կրոնական հավատալիքների հարցում և Դուք պիտի նկատեք, թե որքան եմ օգտվել պ. Մսուրի գրքից և նույնպես օգուտ եմ քաղել այն զրույցներից ու խոսակցություններից, որ ունեցել եմ մի շարք հայերի հետ: Ի դեպ, այստեղ ունենք մի հայ, որին Դուք պետք է ճանաչեք, քանի որ նա եղել է Ձեր վարժարանում. դա Գարապետ վրդ. Շահնազարյանն է, որի հետ պատահություն ունեցա ծանոթանալու. Ե. Դերազանցություն պ. Խրիստափորի մոտ:

Իմ աշխատության մեջ, ինչպես նաև իմ վերջին հրատարակություններում ես չմոռացա հիշատակելու Հովհաննես կաթողիկոսի Ձեր արժեքավոր հրատարակության, Հաղար Փարպեցու կարևոր «Թուղթ»-ի, ինչպես նաև Սայաթ-Նովայի գրքի մասին: Ես գրանք հիշատակել եմ այն հույսով, որ մի օր կգրեմ ընդարձակ գեղեցում:

«Ժողովրդական բանաստեղծություն» անվան տակ մենք չենք ընդունում բոլոր այն երգերը, որ թեև վայելում են մեծ ժողովրդականություն, բայց հեղինակները ծանոթ են: Որպես «Ժողովրդական» մենք ընդունում ենք ժողովրդի անմիջական հույզերից ծնունդ առած երգերը միայն, որ յուրաքանչյուր ոք երգում է ըստ հաճույս և որի մեջ յուրաքանչյուր ոք ավելացնում է մի բառ և որի հեղինակը, վերջի վերջո, ժողովուրդն է և ոչ թե մի առանձին անհատ: Այս տարրորոշումից ելնելով, ժողովրդական երգերի շարքում չենք դասում Բեռանժեի երգերը, որոնք իրենց ժամանակին մեծ ժողովրդականություն էին վայելում: Մինչդեռ մյուս, ավանդական երգերը ունեն ժողովրդական երգի բնույթը և անունը, և ընդունվում են որպես այդպիսին բոլորի կողմից, որ զրադվում են այս նյութով: Այժմ, ըստ վերոհիշյալ սահմանումի, հայկական երգերը ժողովրդական են, թե ոչ: Ահա մի հարց, որ ինձ համար գծվար է ստուգելը: Այս հարցը գեոքավական չի ուսումնասիրված ու քննված: Դուք ի վիճակի եք այդ անելու: շատ ավելի լավ, քան թե ես: Համենայնդեպս, լավ կլիներ ձեռքի տակ ունենալ այնպիսի երգեր, որոնք շրջում են հայ ժողովրդի մեջ՝ որպեսզի այս նյութի մասին գրվի մի հետաքրքրական աշխատություն, նման նրանց, որ գրված են ուսական, սերբիական, իտալական կամ գերմանական երգերի մասին, որոնցից մենք ունենք ժողովածուներ: Ոչ ոք ավելի լավ պատրաստված չէ, քան Դուք, Ձեր հմտալից աշխատություններով ու գիրքով, սկսելու և գլուխ բերելու համար մի այդպիսի գործ: Մինչ այդ, եթե Դուք ինձ տրամադրեք, որպես նմուշ, Ձեզ մոտ եղած երգերից մի քանիսը — գրանք արտագրելով Ձեր ազատ ըոպկներին — գրանով ինձ մեծ հաճույք պատճառած կլինեք: Կ. Պոլսից ես շատ ստացա, բայց գրանք գրեթե բոլորը եկեղեցական երգեր են և շատ չեն օգնի իմ հետազոտություններին: